## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«04» փետրվարի 2026թ. N 11-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 115-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը և հաշվի առնելով «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի փետրվարի 2-ի N INS003-26 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2025 թվականի հուլիսի 22-ի «Քաղաքաշինության բնագավառում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառման ծրագրի հաստատման և կրեդիտների շնորհման մասին» N 115-Ա հրամանի հավելվածը լրացնել 4-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Փետրվարի 23 | 18.30 | «ISO 9001 Որակի կառավարման համակարգեր. Պահանջներ, քաղաքաշինության բնագավառում որակի կառավարման համակարգի | Ծովինար Բիլյան | «Ինստրուկտարիում» ՍՊԸ, Արցախի փ.6/5 | 1-ին կարգի մասնագետին շնորհվելու է 5 կրեդիտ, 2-րդ կարգի մասնագետին շնորհվելու է 5 կերդիտ, 3-րդ կարգի մասնագետի | 1-ին կարգի մասնագետ, 2-րդ կարգի մասնագետ, 3-րդ կարգի մասնագետ 01-34, | 20.000 ՀՀ դրամ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ներդրման առանձնահատկությունները» | | | ն շնորհվելու է 5 կրեդիտ | մասնագիտություններ | |

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2/4/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ